# Հայ գրականության հանրապետական օլիմպիադա

## 2019-2020 ուստարի

(տևողությ ունը՝ 180 րոպե)

## X դասարան

Սիրելի՛ մասնակից. օլիմպիադային մասնակցի՛ր հաղթելու կամքով. հաղթանակդ սրբագործի՛ր հայ գրականության նկատմամբ ունեցած հպարտության և խորին ակնածանքի զգացումով:

Հավատով՝ Ս. Աբազյան

1.Ի՞նչ բացատրություն ունի Րաֆֆի գրական կեղծանունը: Գրական ո՞ր ուղղության ներկայացուցիչն է Րաֆֆին: Ե՞րբ է գրվել «Սամվել » պատմավեպը. Գրելու շարժառիթը. պատմական աղբյուրները: Գրի՛ր քո կարծիքը Սամվելի արարքի մասին. մեղադրի՛ր կամ արդարացրո՛ւ՝ հիմնավորելով: 5մ.

2.Վերլուծի՛ր Սայաթ- Նովայի «Դուն էն գլխեն» խաղը: Ի՞նչ առիթով է գրվել այն, ինչպե՞ս է ներկայանում մեզ միջնադարյան այս հանճարը: Իր բառերով բնութագրի՛ր իրեն: Ո՞վ է Սայաթ-Նովայի առաջին կենսագիրը: Հետագայում ովքե՞ր են անդրադարձել նրա ստեղծագործությանը: Գրի՛ր շրջասույթներ Սայաթ-Նովայի մասին՝ նշելով աղբյուրները, հեղինակներին: 5մ.

3.Հակոբ Պարոնյանի երգիծանքը: Ինչպե՞ս է Պարոնյանը հասել իր նպատակին: Գրի՛ր Պարոնյանի կարծիքը երգիծանքի մասին: Նկարագրի՛ր Պարոնյանի՝ քո նախընտրած հերոսին: Ի՞նչ շրջասույթ գիտես Պարոնյանի մասին:

5մ.

4. Ե՞րբ և ինպե՞ս է գրվել «Քաոս» վեպը: Ինչպիսի՞ վեպ է այն: Նկարագրի՛ր XIX դարի «ոսկի երիտասարդությանը» և համեմատի՛ր այսօրվա «ոսկի երիտասարդության»հետ (եթե գտնում ես, որ կարելի է համեմատել):

Ի՞նչ դեր պիտի ունենա երիտասարդությունը երկրի զարգացման գործում: Ի՞նչը կփոխեիր մեր երկրի կյանքում, եթե ունենայիր այդ հնարավորությունը:

(Նախընտրելի է կրթական համակարգի փոփոխությունը): 5մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան